



ՓԻՂՆ ՈՒ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Օր մը փիղ մը կը քալեր անտառին մէջ ու ընկերներ կը փնտռեր, մինչեւ որ տեսաւ կապիկ մը եւ շուտով անոր մօտենալով հարցուց.

- Սիրելի՛ կապիկ, կրնա՞նք ընկերներ դառնալ:

- Կապիկը արագօրէն եւ առանց մտածելու պատասխանեց.

- Դուն խոշոր ես եւ չես կրնար ինծի պէս օրօրուիլ ծառերուն վրայ, ուստի չեմ կրնար քու ընկերդ ըլլալ:

Փիղը տխուր շարունակեց փնտռել, երբ այս անգամ հանդիպեցաւ նապաստակի մը ու հարցուց անոր.

- Սիրելի՛ նապաստակ, կրնա՞նք ընկերներ դառնալ:

Նապաստակը նայեցաւ փիղին եւ պատասխանեց:

- Ո՛չ, ես եւ դուն չենք կրնար ընկերանալ:



Այնուհետեւ փիղը շարունակեց իր ճամբան, մինչեւ որ հանդիպեցաւ գորտի մը ու նոյն հարցումը ուղղեց անոր.

- Սիրելի՛ գորտ, կրնա՞նք ընկերանալ:

Բայց գորտն ալ միւս կենդանիներուն պէս նոյն պատասխանը տուաւ.

- Դուն չափազանց մեծ ես եւ ծանր ու չես կրնար ինծի պէս ցատկոտել: Յետեւաբար, չես կրնար ընկերս դառնալ:

Փիղը չուսահատեցաւ եւ շարունակեց ընկերութիւն խնդրել բոլոր կենդանիներէն, որոնց կը հանդիպէր իր ճամբուն վրայ, բայց միշտ ալ նոյն պատասխանը կը ստանար:

Յաջորդ օր փիղը յանկարծ տեսաւ, թէ ինչպէս անտառի բոլոր կենդանիները վախցած աչ ու ձախ կը վազէին: Ան արջի մը հարցուց, թէ ի՞նչ էր պատահածը:

Արջը ըսաւ, որ վագրը յարձակած է բոլոր փոքրիկ կենդանիներուն վրայ:

Փիղը առանց մտածելու, ուզեց փրկել կենդանիները, ուստի գնաց վագրին մօտ եւ ըսաւ անոր.

- Կը խնդրե՞մ, պարո՞ն, հանգիստ ձգե՛ իմ ընկերներուն: Վնաս մի՛ հասցներ անոնց:

Սակայն վագրը ականջ չտուաւ եւ ըսաւ անոր, որ ուրիշներուն գործին չխառնուի:

Ուրիշ միջոց չգտնելով՝ փիղը ոտքով հարուածեց վագրին եւ վախցուց անոր,



սպառնալով, որ եթէ վնաս հասցնէ իր ընկերներուն, վերջը լաւ պիտի չըլլայ...

Վագրը զարմացած սարսափահար ձգեց ու հեռացաւ...

Անտառի միւս կենդանիները լսելով այս պատմութիւնը, հասկցան, թէ ընկերանալու համար չափն ու ձեւը կարելորդ չեն:

ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵԱՆ-ՇԱՀԻՆԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՇՈՒՇԵԱՆ

Կրնա՞ս լուծել: Նկատի ունեցիր, որ իւրաքանչիւր թիւ անմիջապէս իր տակ գտնուող երկու թիւերուն գումարումն է:



Գունաւորէ՛ ձիւնաթոյրին հետեւեալ պատկերը նախասիրած գոյներով:



ՀԱՆԵԼՈՒԿ

- Ամեն մարդ ունի
- Փոքրիկ տնակ մը,
- Մէջը սիրունիկ
- Ճերմակ գառնուկներ:

Պատասխան՝ Բերան, ախտանք

Շուտասելուկ

- Համով ծամօն ունի Համօն,
- Համով ծամօն ծախող Համօն
- Իր ծամօնը կը ծամէ համով:

ԵՐԿՈՒ ԹԻԵՐ

Հողագործ Թովմասը օր մը իրենց գիւղի ուսուցիչին հետ նաւակով կը ճամբորդէր:
Թովմաս կը գանգատէր ըսելով, թէ իր դրացի Ղազարը, ամէն տարի իրմէ շատ աւելի լաւ եւ առատ բերք կ'ունենար:

- Ես իրեն չափ կ'աշխատիմ եւ աւելի ալ ուժեղ եմ, բայց ինչո՞ւ իր բերքը իմ բերքէս աւելի առատ ու ընտիր կ'ըլլայ,- կ'ըսէր Թովմաս:

Ուսուցիչը որ կը լսէր անոր գանգատը, ըսաւ.

- Թովմաս, ատոր մէջ զարմանալի բան չկայ: Ղազարը միշտ քու բերքէդ աւելին եւ լաւը պիտի ունենայ:

- Բայց ինչո՞ւ,- զարմացաւ Թովմաս,- չէ՞ որ ես իրմէ շատ կ'աշխատիմ ու իրմէ աւելի առողջ եւ զօրաւոր եմ:

- Այո՛, բայց միայն ուժն ու առողջութիւնը չեն բաւեր մարդուս: Ուրիշ բան մըն ալ պէտք է, բան մը՝ որ Ղազար ունի, իսկ դուն չունիս:

- Ի՞նչ բան:

- Ուսում:

- Ինչի՞ պէտք է ուսումը, երբ ես առողջ եւ ուժեղ եմ,- առարկեց Թովմաս:

- Մինա՛ս,- ըսաւ ուսուցիչը նաւավարին դառնալով,- նաւը յառաջ տանելու համար ի՞նչ կ'ընես:

- Երկու թիւրը մէկտեղ կը քաշեմ,- պատասխանեց նաւավարը:


- Մէկ թին չի՞ բաւեր:

- Ո՛չ, նաւակը ծուռ կ'երթայ ու շուտ չի հասնիր:

Ուսուցիչը դարձաւ Թովմասին:

- Լսեցիր, չէ՞, ինչպէս որ նաւակը մէկ թիով չի կրնար լաւ սահիլ, այնպէս ալ մարդ միայն ուժով չի կրնար յառաջդիմել: Ուսում ալ պէտք է, ապա թէ ոչ դանդաղ կը յառաջանայ ան: Տե՛ս Ղազարը, որ կարողալ-գրել գիտէ՝ գիրքերուն շնորհիւ կը հասկնայ, թէ լաւ ցորեն հասցնելու համար ինչպէ՛ս պէտք է աշխատիլ եւ ի՛նչ հնարքներ պէտք է գործադրել: Ղազար գիրքերուն կը հետեւի եւ հակառակ մարմնով քեզմէ տկար ըլլալուն, շատ աւելի լաւ ու առատ բերք կ'ունենայ ամէն տարի:

Դուք ալ, որքան շատ բան գիտնաք, գիրքերը միշտ ձեզմէ աւելի շատ գիտեն:



ՓՈՔՐԻԿ ԱՍՏՂԱՆԱԻՈՐԴԸ


Ժազ 9 տարեկան ամերիկացի փոքրիկ մըն է: Ան պատասխանած է ամերիկեան անջրպետի գործակալութեան՝ ՆԱՍԱ-ի ծանուցումներէն մէկուն:

Իր նամակին մէջ ժազ բացատրած է, թէ ինչո՞ւ ինք շատ լուրջ թեկնածու մըն էր գործակալութեան մուրակներու պահպանութեան սպայի պաշտօնին համար:

«Իմ քոյրս կ'ըսէ, որ ես արտերկրային էակ մըն եմ, հետեւաբար ես շատ լաւ ծանօթ եմ անջրպետին եւ արտերկրային էակներու մասին բազմաթիւ տեսերիզներ տեսած եմ»:

Ժազ այդ պաշտօնը չստացաւ, որովհետեւ բաւարար փորձառութիւն չունէր մուրակներու պահպանութեան մարզին մէջ, գիտնալով, որ մուրակներու պահպանութիւն չի նշանակեր արտերկրային էակներու դէմ պայքարիլ, այլ՝ հիւանդութիւն պատճառող մանրէներուն դէմ:

Սակայն, հակառակ անոր, ՆԱՍԱ-ն հեռաձայնած է ժազին՝ անոր շնորհակալութիւն յայտնելու իր հետաքրքրութեան համար եւ զինք քաջալերելու, որ շարունակէ շատ լաւ աշխատիլ դպրոցը՝ օր մը անջրպետի գործակալութեան մէջ աշխատելու համար:



A
Dear NASA,
My name is Jack
and I would like
for the planetary
officer job. I maybe
think I would be fi
job. One of the rec
sister says I am a

